<<Վ. Ա. Ֆանարջյանի անվան
ուռուցքաբանության ազգային կենտրոն>> ՓԲԸ
ք. Երևան Ֆանարջյան փ. 76 շ.

20 հուլիսի 2016 թ.
Ժամը 11:00 թիվ՝ 2

Արձանագրություն

< ՈՒԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/4-6> ծածկագրով գնման ընթացակարգի

գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ.
/դեղագետ/ Մ. Թովմասյան
անդամներ -
/դեղագործ/ Ս. Անանյան
Հանձնաժողովի քարտուղար՝
Հարություն Օհանյան

Հանձնաժողովի նիստին բացակայում էին

/համակարգչային օպ./ Օ. Մանուկյան

Այսպիսով՝ ՀՀ կառավարության 10 փետրվարի 2011 թվականի թիվ 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» / այսուհետև՝ Կարգ / 29-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, գնահատող հանձնաժողովի նիստը համարվում է իրավազոր և հայտարարվում է բացված

1. Հայտերի բացման մասին

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Թովմասյան

1. **Ընդունել ի գիտություն որ՝**

1.1 Գնման ընթացակարգի հրավերը, 11 հուլիսի 2016 թ. էլեկտրոնային եղանակով, միաժամանակյա ծանուցմամբ ուղարկվել է <<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/4>> ծածկագրով շրջանակային համաձայնագրեր կնքած բոլոր հնարավոր մասնակիցներին և սահմանված կարգով հրապարակվել է տեղեկագրում :

1.2 Հայտեր ներկայացրել են հետևյալ մասնակիցները՝

«ԱԼՖԱ-ՖԱՐՄ» ՓԲԸ, ք. Երևան, Շիրակի 1/68, ՀՎՀՀ 05507136, էլ. հասցեն՝ artak.keshishyan@alfapharm.am, Հեռ. (060)700500, (010)465092

«Լիկվոր» ՓԲԸ, ք. Երևան, Քոչինյան 7/9, ՀՎՀՀ 01201697, էլ. հասցեն՝ marketing@liqvor.com, Հեռ. (060)378806

«Եվրոֆարմ» ՍՊԸ, ք. Երևան, Ամիրյան փ. 18, 1ա, ՀՎՀՀ 02563667, էլ. հասցեն՝ europharmarmenia@yahoo.com, Հեռ. (010)530577

1.4. Գնման ընթացակարգի հրավերով նախատեսված 4.2 հավելվածը՝ Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ մատակարարելու վերաբերյալ հայտարարություն ներկայացրել են՝

«Լիկվոր» ՓԲԸ-ն 3-րդ չափաբաժնի մասով

2. **Հայտ ներկայացրած մասնակիցների կազմած ծրարների համապատասխանության մասին**

2.1 Հայտ ներկայացրած մասնակիցների՝ ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունել որոշում՝ կողմ ***2 (երկու),*** դեմ ***0 (զրո)*** ձայներով

3. **Հայտ ներկայացրած մասնակիցների հայտերում ներառված փաստաթղթերի համապատասխանության մասին**

3.1 Հայտ ներկայացրած՝ մասնակիցների կողմից ներկայացրած հայտերում ներառված փաստաթղթերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան.

3.2 <<Եվրոֆարմ>> ՍՊԸ-ի ներկայացված գնային առաջարկում Մասնակիցը նշել է, որ իր կողմից առաջարկվող՝ 2-րդ չափաբաժնով նախատեսված <<ցիսպլատին>> դեղի պիտանիության ժամկետը մինչև 2017 թվականի նոյեմբեր ամիսն է իսկ 3-րդ չափաբաժնով նախատեսված <<զոլեդրոնաթթու>> դեղի պիտանիության ժամկետը մինչև 2017 թվականի հուլիս ամիսն է.

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետի և Կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետի

պահանջներին համաձայն հայտերի բացման նիստում որոշվում է՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած Մասնակիցները: Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով իսկ ապրանքի տեխնիկական բնութագրի՝ որին վերաբերվում է նաև դեղերի պիտանելիության ժամկետները, գնահատումը կատարվում է Կարգի 49-րդ կետի պահանջներին համապատասխան հրավիրվող գնահատող հանձնաժողովի նիստում:

Հաշվի առնելով սույն ենթակետում արձանագրվածը և, որ Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներին համաձայն ապրանքների տեխնիկական բնութագրերի վերաբերյալ տեղեկատվությունը հարկավոր է ներկայացնել հայտերի բացման նիստից հետո, հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղար Հ. Օհանյանին ծանուցել <<Եվրոֆարմ>> ՍՊԸ-ին իր ներկայացրած գնային առաջարկում դեղերի պիտանելիության ժամկետների վերաբերյալ նշված տեղեկատվությունը ներառել Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներին համաձայն իր կողմից ներկայացման ենթակա՝ առաջարկվող ապրանքների անվանումը և տեխնիկական բնութագրերը նկարագրող փաստաթղթում

Ընդունել որոշում՝ կողմ ***2 (երկու), դեմ 0 (զրո)*** ձայներով

4. **<u>Հայտերի վերաբերյալ հարցումների և ներկայացված պարզաբանումների մասին՝</u>**

4.1 Հայտերի վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ չեն եղել.

5. **<u>Ներկայացված բողոքների և դրանց վերաբերյալ կայացված որոշումների մասին՝</u>**

5.1 Բողոքներ չեն եղել:

6. **<u>Հակաօրինական գործողությունների հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագրի մասին՝</u>**

6.1 Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել

7. **<u>Կազմակերպված բանակցությունների մասին՝</u>**

7.1 Բանակցություններ չեն կազմակերպվել:

8. ***<u>Տեղեկություններ մասնակիցների կողմից ներկայացված գների վերաբերյալ</u>***

Հ/Հ	Ապրանքի				1	2	3	ԱԱՀ-ի մասին	Միավորի ձեռքբերման առավար նախատեսված գումարը գրանցելիությամբ
	Անվանումը	Բնութագիրը	Հ/Մ	Քանակը	<<Եվրոֆարմ>> ՍՊԸ	<<Ալֆա - Ֆարմ>> ՓԲԸ	<<Լիկվոր>> ՓԲԸ		
1	կարբոպլատին	լուծույթ ներարկման՝ 10մգ/մլ; 45մլ ապակե 22հիկ	սրվակ	1000		30833333		առանց ԱԱՀ	37500
						37000000		ԱԱՀ-ն ներառյալ	
2	ցիսպլատին	լուծույթ ներարկման՝ 1մգ/մլ; 50մլ ապակե 22հիկ	սրվակ	1000	3750000	5400000		առանց ԱԱՀ	6500
					4500000	6480000		ԱԱՀ-ն ներառյալ	
3	զոլեդրոնաթթու	խտանյութ կաթիլաներարկման լուծույթի 4մգ/5մլ; ապակե սրվակ 5մլ	սրվակ	200	3383333		4000000	առանց ԱԱՀ	30000
					4060000		4800000	ԱԱՀ-ն ներառյալ	

9. ***<u>Մերժված հայտերի վերաբերյալ</u>***

9.1 Մերժված հայտեր չկան:

10. **<u>Չկայացած չափաբաժինների վերաբերյալ</u>**

10.1 Չկայացած չափաբաժիններ չկան.

Ընդունել որոշում՝ կողմ ***2 (երկու),*** դեմ ***0 (զրո)*** ձայներով

11. **<u>Գնման ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մսնակիցների վերաբերյալ</u>**

11.1 գնահատող հանձնաժողովի կողմից քննարկվեց գնման ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան հայտեր ներկայացրած Մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկները և հանձնաժողովը նախապատվությունը տալով նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակիցներին՝

կողմ ***2 (երկու),*** դեմ ***0 (զրո)*** ձայներով Որոշեց

գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել

1	<<Եվրոֆարմ>> ՍՊԸ-ին	2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով
2	<<Ալֆա - Ֆարմ>> ՓԲԸ-ին	1-ին չափաբաժնի մասով

գնման ընթացակարգի երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել

2	<<Ալֆա - Ֆարմ>> ՓԲԸ-ին	2-րդ չափաբաժնի մասով
3	<<Լիկվոր>> ՓԲԸ-ին	3-րդ չափաբաժնի մասով

12. <u>Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին</u>

12.1 Գնման ընթացակարգի հրավերով սահմանված Մասնակիցների որակավորման չափանիշների գնահատման արդյունքների հրապարակման նպատակով հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել Կարգի 49-րդ կետով սահմանված ժամկետներում: Հանձնարարվում է գնահատող հանձնաժողովի քարտուղարին Կարգի 47-րդ կետի դրույթներին համապատասխան՝

- Կատարել հարցում առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև գնման ընթացակարգի հրավերով սահմանված <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:
- Ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել գնման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և առաջարկվող ապրանքների անվանումները և տեխիկական բնութագրերը:
- Հաշվի առնելով, որ <<Եվրոֆարմ>> ՍՊԸ-ն 2-րդ և 3-րդ չափաբաժինների համար ներկայացրել է, նշված չափաբաժիններում ներառված գնման՝ առարկա հանդիսացող ապրանքների համար Պատվիրատուի կողմից՝ ձեռքբերման համար նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից ցածր գնային առաջարկ, առաջարկել՝ <<Եվրոֆարմ>> ՍՊԸ-ին 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ առաջարկված գների վերաբերյալ

Ընդունել որոշում կողմ ***2 (երկու),*** դեմ ***0 (զրո)*** ձայներով

Գնահատող հանձնաժողովի նախագահ.

/դեղագետ/ Մ. Թովմասյան

անդամներ -

/դեղագործ/ Ս. Անանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Օհանյան